



ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 3,
sssysuib@gmail.com, ijevan.yasu.am

3 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 077-07-24-87

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ

2013-2014 թթ. ուս. տարվա ընթացքում կատարված աշխատանքներ

2013-2014 թթ. ուս. տարվա ընթացքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել կանոնադրային պահանջներից բխող գործառնություններ ու քայլեր, աջակցել է ուսանողությանը՝ գիտական և կրթական ոլորտներում, նպաստել ուսանողների գիտական, ստեղծագործական ու հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

Ստորև ներկայացված է կատարած աշխատանքների ցանկը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Գիտական և գիտահանրամատչելի զեկուցումներ՝ հետևյալ թեմաներով՝

1. «Լեոնարդո դա Վինչի» (Կ/Ա ֆակուլտետ, 13.10.2013 թ.),
2. «Օպերատորի սեփական արժեքների ֆիզիկական իմաստը» (Բ/Գ ֆակուլտետ, 18.11.2013թ.),
3. Զեկուցումներ շարք (Հ/Գ ֆակուլտետ, 27.11.2013 թ.),
4. «π թիվը» (Բ/Գ ֆակուլտետ, 19.03.2014 թ.),
5. «Ածանցյալի կիրառությամբ ապացուցվող անհավասարություններ» (Բ/Գ ֆակուլտետ, 20.03.2014 թ.),
6. « Հաղարծնի վանքային համալիր» (Տնտ. ֆակուլտետ, 22.03.2014 թ.),
7. « Գոշավանք» (Տնտ. ֆակուլտետ, 22.03.2014 թ),
8. « Կիրանց վանք, Կիրանց, Հաբաստան» (Տնտ. ֆակուլտետ, 23.03.2014 թ),
9. «Մակարավանք, հայկական վանական համալիր» (Տնտ. ֆակուլտետ, 23.03.2014 թ),
10. Զեկուցումների շարք (Հ/Գ ֆակուլտետ, 15.04.2014 թ.),
11. «Պարլո Պիկասսո» (Կ/Ա ֆակուլտետ, 26.04.2014 թ.),
12. և այլն

Կինոդիտումներ`

1. “Анизотропный мир”: Գիտահանրամատչելի ֆիլմում ներկայացվում են աշխարհի մասին մեր պատկերացումները` մաթեմատիկայի տեսանկյունից: Մասնավորապես խոսվում է Ֆինսլերի տարածության մասին: (Բ/Գ ֆակուլտետ, 23.09.2013թ.),
2. Հոգեբանական ֆիլմի դիտում և քննարկում: (Հ/Գ ֆակուլտետ, 23.04.2014 թ.),
3. «Վանա ծովուն արշալույսը» գեղարվեստական ֆիլմ: (11.04.2013 թ.),
4. «Դա Վինչիի կողը» գեղարվեստական ֆիլմ: (06.05.2013 թ.),

Գիտաժողովներ`

1. Բնական գիտությունների ֆակուլտետում` «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության գծով: Ներկայացվեց 4 զեկուցում: (25.04.2014 թ.),

Ինտելեկտուալ խաղեր`

1. Թիմային ինտելեկտուալ խաղի մասնաճյուղի առաջնություն: 4 ֆակուլտետներում խաղին մասնակցեցին 22 թիմեր: (մարտ 2014 թ.),
2. Անհատական ինտելեկտուալ խաղ, տնտեսագիտության ֆակուլտետում: (27.02.2014 թ.),

Այլ տիպի միջոցառումներ`

1. Մաթեմատիկայի օլիմպիադա: Մասնակցեցին բնական գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետի 18 ուսանողներ: (փետրվար 2014թ.),
2. Կիրառական արվեստի ֆակուլտետի ցուցահանդես: Ներկայացված էր շուրջ 25 աշխատանք: (մայիս 2014թ.),
3. Գրական-գեղարվեստական ցերեկույթ` նվիրված Մայիսյան հաղթանակներին (մայիս 2014 թ.):
4. «Կոռուպցիան Հայաստանում» թեմայով բանավեճ:

Վերոշյալներից բացի ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ անդամները մասնակցել են «Զինիշյան» հիշատակի հիմնադրամի հովանավորած դրամաշնորհային ծրագրերի իրականացմանը, բանավեճի հանրապետական մրցաշարի, հեռուստաբանավեճերի:

Նախորդ ուս. տարում ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ նախագահ Սլավիկ Ալավերդյանի` մասնաճյուղն ավարտելու կապակցությամբ ՈԻԳԸ նախագահի պարտականությունները ժամանակավորապես ստանձնել էր ՈԻԳԸ փոխնախագահ

Արա Հովսեփյանը: 2013 թ. դեկտեմբերի 11-ի ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդի նիստում Արա Հովսեփյանը հաստատվել է ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ նախագահի պաշտոնում:

2014 թ. փետրվարի 21-ին տեղի ունեցած «Հայկյան 2013» մրցանակաբաշխության ժամանակ ԵՊՀ ԻՄ ՈԻԳԸ-ն հաղթող է ճանաչվել «Լավագույն մարզային ինքնակառավարման մարմին» անվանակարգում: Մրցանակը ստացել են ՈԻԳԸ գործող և նախկին նախագահներ Արա Հովսեփյանը և Սլավիկ Ալավերդյանը:

Նախորդ ուս. տարում մասնաճյուղի ՈԻԳԸ-ն ունեցել է 21 անդամ, որոնց մեջ, համաձայն մասնաճյուղի ՈԻԳԸ գիտական խորհրդի որոշման, մտել են մասնաճյուղի ՈԻԳԸ նախագահը, փոխնախագահը, քարտուղարը, 4 ֆակուլտետների ՈԻԳԸ նախագահները և քարտուղարները, 10 մասնագիտությունների ակումբների նախագահները: 2013-2014 թթ. ուս. տարվա ընթացքում ժամանակավորապես դադարեցվել է ակումբների գործունեությունը, ինչի արդյունքում ի պաշտոնե ՈԻԳԸ անդամների թիվը դարձել է 11: Հետագայում կիրականացվի ՈԻԳԸ անդամագրման գործընթաց՝ համաձայն ԵՊՀ ՈԻԳԸ անդամագրման կարգի: